ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **19.03.2023թ-ի «Արարատ-աղջիկներ»-«Սուրենավան-աղջիկներ» (ԿԱԽ1-019) խաղի ժամանակահատվածում «Արարատ-աղջիկներ» թիմի 7 ֆուտբոլիստից պակաս լինելը, թիմի մեղքով խաղը չկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Ֆուտբոլ խաղի կանոնների 3-րդ կանոնը և Կանոնակարգի 46-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Արարատ-աղջիկներ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

2. **19.03.2023թ-ի «Փյունիկ-աղջիկներ-2»-«Վեստ Արմենիա-աղջիկներ» (ԿԱԽ1-020) խաղի ժամանակահատվածում «Փյունիկ-աղջիկներ-2» թիմի ֆուտբոլիստ Կարինե Մկրտչյանի (40163) կողմից խաղի ժամանակահատվածում գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-աղջիկներ-2» թիմի ֆուտբոլիստ Կարինե Մկրտչյանի (40163) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 47-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

3. **10.03.2023թ-ի «Արարատ»-«Վան» (ՊԼ-114) խաղի 1) դոպինգ ստուգման պայմաններին համապատասխանող սենյակ չտրամադրելը, 2) խաղի ժամանակահատվածում խաղադաշտի գովազդային կողավահանակների ոչ պատշաճ տեղադրումը, 3) վիճակահանության նետման համար բրենդավորմամբ կամարի առկայությունը խաղադաշտում չապահովելը, 4) ՀՖՖ և Հայաստանի բարձրագույն խմբի դրոշակների դրոշակաձողերին ամրացված չլինելը, 5) VAR սարքի սխալ տեղակայումը, 6) Անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելը, այլ անձի մրցավարական սենյակ մտնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 58-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 46-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
3) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 48-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
5) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝

«Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6) Հաստատված համարել «Արարատ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

4. 19.03.2023թ-ի «Լեռնային Արցախ-աղջիկներ»-«Հայասա» (ԿԲԽ-020) խաղի ժամանակահատվածում «Հայասա» թիմի ներկայացուցչի խաղադաշտ ներխուժելը, ակումբի կողմից կարգ ու կանոն չապահովելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Հայասա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 49-րդ կետը՝ «Հայասա ՖԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. 27.03.2023թ-ի «Ուրարտու-4-13»-«Վեստ Արմենիա-13» (10Մ7-023) խաղին «Վեստ Արմենիա-13» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. 25.03.2023թ-ի «Սարդարապատ-05»-«Կողբ Յունայթեդ-05» (18Բ-038) խաղին «Կողբ Յունայթեդ-05» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թույլատրել վերնշանակել «Սարդարապատ-05»-«Կողբ Յունայթեդ-05» (18Բ-038) հանդիպումը:

7. 25.03.2023թ-ի «Ոսկեվազ աղջիկներ-2»-«Սասունիկ աղջիկներ-2» (ԿՄ10ԱԳ-004) խաղին «Ոսկեվազ աղջիկներ-2» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ոսկեվազ աղջիկներ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Ոսկեվազ աղջիկներ-2» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

8. **26.03.2023թ-ի «Ակադեմիա-3-10»-«Նորք-10» (13Մ3-074) խաղին «Ակադեմիա-3-10» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-3-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Ակադեմիա-3-10» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

9. **25.03.2023թ-ի «Օշական-13»-«Ոսկեվազ-13» (10Մ4-003) խաղին «Օշական-13» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օշական-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Օշական հ/պետարան»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

10. **26.03.2023թ-ի «Կարբի-12»-«Արագածավան 1 դպ.» (ԿՄ12ԱԳ-002) խաղին երկու թիմերի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Կարբի-12» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Կարբի-12» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:
2) Հաստատված համարել «Արագածավան 1 դպ.» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Արագածավան 1 դպ.» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

11. **23.03.2023թ-ի «Շիրակ-2-10»-«Դովեղ-10» (13Մ2-045) խաղին «Դովեղ-10» թիմի ուշ ներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

12. **28.03.2023թ-ի «Կարբի-13»-«Նիգ-Արագած-13» (10Մ4-001) խաղին «Կարբի-13» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կարբի-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Կարբի

հ/պետարան»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

13. **26.03.2023թ-ի «Նոա-աղջիկներ»-«Փյունիկ-աղջիկներ-2» (ԿԱԽ1-023) խաղի ժամանակահատվածում «Նոա-աղջիկներ» թիմի կողմից չհայտավորված ֆուտբոլիստի մասնակցելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Նոա-աղջիկներ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

14. **23.03.2023թ-ի «Գետահովիտ-09»-«ԱՖԴ-09» (14C2-037) խաղի ժամանակահատվածում «Գետահովիտ-09» թիմի կողմից կարգ ու կանոն չապահովելը, երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը, անհարգալից արարքներ թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Գետահովիտ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Գետահովիտ-09» թիմի նկատմամբ որպես պատժամիջոց կիրառել մարզադաշտի որակազրկում 3 խաղի համար և «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

15. **25.03.2023թ-ի «Օնոր-05»-«Վանաձոր-06» (18B-039) խաղի ժամանակահատվածում «Օնոր-05» թիմի մեղքով խաղի չկայանալը, խաղադաշտի՝ խաղին պատրաստ չլինելը, դաշտի անհարթ լինելը, ոստիկանության բացակայությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Օնոր-05» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

16. **30.03.2023թ.-ի «Փյունիկ-1-11»-«Արարատ-Արմենիա-10» (13Գ-029) խաղի ժամանակահատվածում «Արարատ-Արմենիա-10» թիմի ֆուտբոլիստ Գոռ Եփրեմյանի (35937) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի նկատմամբ բռնարարք թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-10» թիմի ֆուտբոլիստ Գոռ Եփրեմյանի (35937) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և

«Արարատ-Արմենիա» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով։

Հիմք ընդունելով Կանոնակարգի 25-րդ հոդվածի 14-կետը՝ «Արարատ-Արմենիա-10» թիմի ֆուտբոլիստ Գոռ Եփրեմյանի (35937) խախտման վերաբերյալ կայացրած որոշումը կիրառել միայն Մ-13 տարեկանների Գավաթի խաղարկության շրջանակներում։